Համաշխարհային բանկի Պարտականությունների կատարման գծով

խորհրդականի/ Օմբուդսմենի ապարատին (CAO)

ՀՀ Վայոց ձոր մարզի Գնդեվազ գյուղի բնակիչներից

Դիմում-բողոք

Նկատի առնելով ոսկու արդյունահանման՝ առավել ևս բաց եղանակով արդյունահանման և ցիանային հարթակի բացասական վտանգները շրջակա միջավայրի և տեղի բնակչության՝ հանձինս Գնդեվազ գյուղի համայնքի, ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի բնակիչները դիմում են CAO-ին հետևյալ բողոքով: Մենք՝ Գնդեվազ գյուղի բնակիչներս, բազմիցս արձանագրել ենք Ամուլսարի հանքավայրի հետախուզական աշխատանքների բացասական հետևանքները.

- մեր գյուղատնտեսական ապրանքները դժվարությամբ են իրացվում շուկայում,
-անասունները Ամուլսարի ազդեցության գոտուց բերված անասնակերը չեն ուտում,
-Գնդեվազում կայացած հանրային լսումների ժամանակ Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ կարծիքները չեն արձանագրվում,
-միջազգային նորմերին չհամապատասխանող, երկու կիլոմետր հեռավորության վրա նախագծով կառուցվող ցիանային հարթակը իր կործանարար ու մահաբեր հետեւանքները կունենա թե Գնդեվազի շրջակա միջավայրի, և թե Գնդեվազի բնակչության վրա:

Մենք՝ Գնդեվազ գյուղից Ամուլսարի հանքավայրում աշխատողներս, արդեն իսկ տուժել ենք հանքավայրում աշխատելու ընթացքում՝ չստանալով համապատասխան բժշկական օգնություն և հետազոտություն:

«Գեոթիմ» կազմակերպությունը մանիպուլիացիայի է ենթարկում գնդեվազցիներին՝ ասելով, որ իրենց հողատարածքները կգնահատվեն շատ բարձր գներով, վաճառքից ստացված գումարով կկարողանան գնել բնակարան Երևանում և հանրապետության այլ տարածքներում և կտեղահանվեն:

Գեոթիմ կազմակերպությունը իր գործը առաջ տանելու համար շրջանառում է բնակչությանը խաբելու ցանկացած միջոց, այդ թվում հավաքում է գյուղացիների հողերի սեփականության վկայականները, իբր չափագրումները իրականացնելու համար, բայց վերջինս խաբկանք է և նպատակը անհայտ է:

Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման ընթացքում, պայթեցումներ կատարելու հետևանքով ծանր մետաղների փոշին կտարածվի գյուղի արոտավայրերի , խոտհարքների, արտերի, ինչպես նաև գյուղի բնակելի տարածքի վրա: Անկախ փորձագետների հավաստմամբ, կբարձրանա ռադիոակտիվ ֆոնի մակարդակը:

Մեր իրավունքների խախտումը տեղի է ունենում IFC և EBRD-ի հովանավորչությամբ:

Գեոթիմ կազմակերպությունը ոչ իրավական ճանապարհով է հարցերը լուծում և այն բնակիչները, ովքեր չեն պատրաստվում Գնդեվազը լքել, կամ ստիպված են իրենց հողերը վաճառել, դառնում են այս մանիպուլիացիայի զոհերը:

Մենք՝ Գնդեվազ գյուղի ներքոստորագրող բնակիչներս,կտրականապես դեմ ենք Ամուլսարի հանքավայրի շահագործմանը և Գնդեվազի հարակից տարածքներում ցիանային հարթակի կառուցմանը:

Մենք պահանջում ենք IFC-ից դադարեցնել այս հանցավոր ծրագրի ֆինանսավորումը, քանի որ այն կործանարար վտանգներ է պարունակում Գնդեվազի բնակչության համար:

Մենք պահանջում ենք հաշվի առնել մեր կարծիքը և չխախտել մեր իրավունքները: